

# ԳՐԱԿԱՆ

Ե Ի

## ԻՄԱՍՏՍԱԻՐԱԿԱՆ

### ՇԱՐԺՈՒՄ

Տ Ե Տ Բ Գ.

#### ԵՐԱՆԻ ՄԵՐԱՏԱՆՅ

##### ՈՐՔ ԶԵՆ ԱՂՔԱՏ ՍՐՏՈՎ ՈՒՄՏՔՈՎ

Մեր ընթերցողք, նոքա որք ունին սուր եւ նոքա որք ունին սակաւ յիշողութիւն, կը յիշեն Հաւաքածոյիս Նախարանին վերջաւորութիւնն: Յատուկ անուն մը կը փայլէր հոն. Անուն մը, համանիշ հաստատուն երկաթի եւ համանիշ զգայուն սրտի. Անուն մը, որ ազգային օրագրաց ռախիւնակին մէջ, այսինքն ազգասիրական ու մարդասիրական գործոց յիշատակութեան նուիրուած արդարեւ նուիրական այն սիւնակին մէջ ստէպ կը տեսնուի. Անուն մը, որ յոյժ քաղցր Հայոց սկանջին յաւէտ կը հնչէ. զի այդ անուամբ ծանօթ, այդ գեղեցիկ անուամբ հանրածանօթ անձն՝ այն հազուագիւս ազգայիններէն է, որք իրենց գերդաստան պայծառութեան համար աւաքինաբար վաստակելով հանդերձ՝ ազգասիրաբար կը տքնին մանաւանդ մեծազոյն գերդաստան, այսինքն ազգին պայծառութեան համար, — եռանդեամբ մասնակցելով ազգային խորհրդոց աշխատանայ, օրինաւոր



գոռոզութեամբ գլուխ կանդնելով հայրենանպաստ հանգանակութեանց, ինքնայորդոր ձեռնառու-թեամբ քաջալեր հանդիսանալով հանրօգուտ ձեռնարկութեանց՝ ձեռարուեստական թէ՛ դեղարուեստական թէ՛ մտական մատենադրական: Այդ հազուագիւտ ազգասէր մեծատանց մին է, սրտով ու մտքով այն նախանձելի եւ երանելի մեծատանց մին է, այժ, Պարոն Մկրտիչ Լյաւեան:

Ես որ, այր թէ՛ կին անձի վրայ կը նկատեմ միայն ներքին արժանիքն եւ ոչ արտաքին պերճանքն ու պաճուճանքն. ես որ՝ սոխակաց ձայնովն ի կեանս զարթուցեալ ըլլալովս գուցէ՝ բնական բերում մը ունիմ ի լուր աշխարհի հռչակելու « քնարերգական ոճով » ամեն ձիրք եւ ամեն իսկական արժանիք որք արեգական ներքեւ ակնախտիղ կը փայլին, թէ՛ ծանօթ կամ անծանօթ, թէ՛ ոստանիկ կամ մուրացիկ, թէ՛ ծերունի կամ պատանի լինին ճրիւք օժտեալ կամ արժանեաց տիրացեալ անձինքն. ես, հետեւելով՝ միայն իմ բնական բարեբաստիկ բերման, որպէս ուրիշ երկասիրութեան մը մէջ արգարացի գովեստիւք յիշատակած էի՝ ներկայ հրատարակութիւնս ալ նուիրեցի լիովին այն ազնուախոհ անձին, որ հոգւոյն մէջ անբացատրելի սէր մը կը տածէ գեղատառից ու գեղարուեստից նկատմամբ, եւ ամեն դեղեցիկ եւ ամեն բարի եւ ամեն ճշմարիտ բանի նկատմամբ. այն անձին, ոյր սիրան ուժգին կը տրոփէ սիրովն իր ազգին, ազգային լեզուին եւ ազգային կրօնին. այն անձին, որ ողջոյն կու տայ խոնարհութեամբ ստեղծագործ հանձարին, եւ վեհանձնութեամբ խրախոյս կը կարգայ տիեզերա-հռչակ տաղանդին. այն անձին, որ պատկառանք



կը բանայ գլուխն ի տես առաքինւոյն, եւ կը բանայ դուռն երկթեւեան՝ մեծին կէօթէի նման՝ ի հասանել արեգական կենդանարար լուսոյն, ի հասանել գիտութեան աստուածարար լուսոյն: —

Գարնանարեր, որքան եւ մահարեր, այն Մարտ ամսոյն կիսուն՝ մտերիմն Մինաս Չերազ եկաւ գտաւ զիս ի Պէշիկթաշ մահիճի մէջ, ուր կը տառապէի — վաղանցնուի տառապանք — կուրծքի հինաւուրց իմ հիւանդութեամբ: Ինձ մատոյց ծանր ծրար մը. բացի զայն, եւ կարգացի Պարոն Մկրտիչ Էսաեանի նամակն. «... Ամէն նիւթի վրայ այնքան հմտութեամբ կը գրէք, եւ այնպիսի փայլ մը կուտաք ձեր գրութեանց՝ դնելով ամբողջ ձեր ոգին ու խանդն անոնց մէջ՝ որ անկարելի է կարգաւ ու չզգածուիլ:» Այսպէս կը վկայէ գեղեցիկ լեզուով իմ գեղահոգի բարեխառն, — որ այս անուամբ զիս՝ խոնարհ գրագէտս՝ կը պատուէ, հակառակ իր բարձր դրից եւ հակառակ այն դեռ մեծաթիւ մեծատանց (մազ մնաց ձ ով պիտի գրէի), որք պատարարոյժ կ'անուանեն ինձ նմաններն, ազգային ուսուցիչներն ու գրիչներն, Հայ լեզուին ու Հայ ոգիին պահպանիչներն, Հայ մտաց հրահանգիչներն, Հայութեան փրկիչներն —: Որքան կը հրճուիմ, երբ այսպէս կը վկայեն ընդհանրապէս նոքա՝ որք կը հաճին հաւաքել ու վերծանել հողմավար էջերս. ո՛հ, անտարակոյս շեմ ակնարկեր « փայլին զոր կուտամ գրութեանցս », կամ « հմտութեան սրով լի են հատուածներս », կամ այլ բարձրագոյն գրուատեաց՝ զորս ի մէջ չը բերի Պարոն Էսաեանի նամակէն. յանհունս կը հրճուիմ եւ կը հաւատամ, կ'ըսեմ, երբ գգուալից բերանք



կը մրմնջեն՝ ընդհանրապէս գրուածոցս վրայ [սոսերով՝ թէ « անկարելի է կարդալ ու չզգածուիլ » . կը հաւատամ, զի մերթ արտասուքս — եւ արիւնս — կը խտռնուին մեւանիս, եւ զի մերթ՝ երբ ձեռագիրս յանձնեմ տպարանին՝ դեղագիրս ալ միանգամայն կը յանձնեմ դեղարանին . . . : Ի՛նչ է արժի գրագիտին<sup>(1)</sup> վարձն . — յուզմունք իր ընթերցողաց՝ եւ մանաւանդ իր ընթերցուհեաց՝ սրտին մէջ, արտասուք իր ընթերցողին աչաց մէջ, կաթիլ մ'արտասուք մանաւանդ իր ընթերցուհւոյն դալկահոյր այտին վրայ . Լօրա Պայրընի նման, « զոր խնդրեմն համայն ուխտիւք՝ է շիթ մի լոկ արտասուք » :

Եւ սակայն . . . ինձ ուրիշ վարձ մ'ալ հաճած է յգլել իմն Միրտիչ Էստեան : Ինչպէ՞ս ըսեմ . . . Այլ ըսի զայն արդէն . Ծանր էր՝ ըսի՝ ծրարն . . . : Է՞ր մտաբերած է զիս այսպէս ալ վարձատրել . իր ոսկեղէն սրտին զգացմանց թարգմանն՝ ոսկի անապակ էր իր նամակն . Է՞ր նամակաթուղթին մէջ ոսկի թղթադրամներ ներփակած է Միրտիչ Էստեան .

— Զի դրասէրն եւ ազգասէրն Էստեան կը փափաքի թէ Գրական եւ Խնասասիրական Շարժումն եւս աւելի Հայ ազգին մէջ ծաւալի . թէ « խնամով խմբադրուած » Հաւաքածոյ մ'ընթերցողներ ունենայ յամեն մի Հայ դաւառի . թէ ճշմարտին սէրն ու բարւոյն հաւատն՝ որովք հոգիս կը բոցավառի՝ նոր սերնդեան եւ Հայ ժողովրդեան հոգւոյ ընդհանուր փոխանցի . թէ զեղեցկին սաշտամունքն՝ ում նուիրած եմ կեանքս՝ ըլլայ նաեւ համայն սրտից ու մտաց ալ սաշտամունքն, եւ տիրէ՝ ճաշակն

(1) Սէնդ-Պէօզ կ'ըսէ՝ cœur littéraire, գրական սիրտ : Ես ալ ստեղծեցի Հայ լեզուին մէջ արժի գրագիտ բացատրումըն :



ոճոյ մէջ, եւ բարուց մէջ ալ տիրէ ճաշակն. եւ տիրէ բարոյական շէնքին եւ տիրէ նիւթական շէնքին մէջ ընտիր ճաշակն:

Այլ եւս փափաք մ'ունի մեծանձն Էսսեան. « Կը փափաքէի որ աւելի ընդարձակ լինէր քո Հանդէս, » կը գրէ նամակին վերջն. եւ կը յարէ. « Յուսամ թէ օր մը կը հասնիմք ունենալ այս եւս: » Հարուստ արդարեւ Էսսեան. հարուստ իղձերով, հարուստ խորհուրդներով, հարուստ սիրով ու հաւատով. — Եւ ինչ կ'արժէ նիւթական հարստութիւնն՝ անդին եւ անկապուտ այդ հարստութեանց քով. Ոսկւոյ հանք ունի դա, եւ իղձ չունի, աղնիւ իղձեր իր սրտին մէջ չունի. ո՛ւր եւ իմի՞ք այդ ոսկին օգուտ ունի. Բայց երբ կը տենչայ մարդ լաւագունին եւ աղնուագունին. երբ կը յաւակնի յաւէտ նա բարձրագունին, երբ մարդուս իղձերն հողագունտէն վեր՝ մինչեւ հրոյ բնադաւառներն հոլաթեւ կը սաւառնին, եւ երբ իր սէրն ընտանեկան անձուկ սոհմանէն անդին՝ կը սարածուի մինչեւ ի վերայ մեծածաւալ աղղային եւ մարդկային ընտանիքին, հարստութիւնն յայնժամ սրտուանդան մը կամ ոսկեայ սանդուղ մ'է մեծատան համար, եւ հարստութիւնն սպաքէն լծակ մ'է յայնժամ քաղաքակրթութեան համար: Այդպիսի մեծատանց վրայ չէ որ վնջ կարգաց Քրիստոս. եւ ես Աւետարանին օգուտն կատարելապէս համաձայն վճիռ մ'արձակած կըլլամ գոչելով — Երանի այն ազգին՝ ոյր մեծատունք չեն աղքատ մտքով ու սրտով:

---



## ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայ իգական սեռի լուսաւորութեան վրայ քանի տարիներէ հետէ յաճախ կը խօսուի: Էր երբեմն կի՛ն եւ մեղփ բառերուն զուգորդութենէն բնական բան չը կար . իսկ այսօր զոյգ կը գործածեն հանրապէս կի՛ն եւ ուսում բառերն: Եւ կը թուեն պերճիմաստ օրիորդներ, եւ կը դրուատեն մեծատաղանդ տիկիներ, եւ ծանօթութեանց քանակութիւնն երկու սեռերուն մէջ հաւասարաչափ կը գտնեն՝ իգական սեռին անակնկալ զարթնումէն եւ արագափոյթ զարգացումէն յախշտակեալ ազնուասիրտ անձինք ոմանք: Ստոյգ է այս, այսինքն ստոյգ է թէ մեր ազգին մէջ մտաւորապէս օժտեալ եւ ուսեալ արանց հաւասարաթիւ օժտեալ եւ ուսեալ տիկնայք կան, որք՝ արմատացեալ նախապաշարմանց պատճառաւ՝ կը հարկադրուին քանքարաթաքոյց եւ ուսումնաթաքոյց ըլլալ ի վնաս երկսեռ Հայութեան: Այս հարցման գէթ երկրորդ կետին — զի վիճակագրութենէ վեր է մտաւոր օժիտի խնդիրն — հաստատական պատասխան չը պիտի կրնանք տալ մեք, որ գոհութեամբ ու գովութեամբ յիշատակած ենք հանապաղ աղջկանց դաստիարակութեան բարեօրման եւ կանանց մտաւոր ազատագրութեան նկատմամբ կատարուած ջանքերն երկու սեռերուն ալ կողմէն. մեք, որ ամենադոյզն առիթէն օգուտ քաղած ենք յականէ անուանէ ներքողիւք յիշելու համար Հայ ազգին գրագիտուհիներն ու գործչուհիներն:



Ահա Դպրոցատէր Տիկնանց ընկերութիւնն ալ, իր Երրորդ Տեղեկագրին մէջ զոր հաճած է յղել մեզ, կը հաստատէ՝ դեռ ուրիշ ցաւալի բաներու հետ՝ սոյն մեր ասութիւնն. այսինքն թէ՛ հոշակին հակառակ՝ կարի նուազ (մանաւանդ միջին եւ ստորին դասուց մէջ) ծաւալած են տախաւին ուսմունք, եւ կարի սակաւութիւ են ուսուցչուհիք տախաւին Հայոց գեղեցիկ սեռին մէջ, — զոր անտարակոյս չեմ այսպաներ իր համեմատական յետադիմութեանն համար: — Անցեալ տարի, Միջադիւղի ճորին մէջ հաստատուած իգական սեռի վարժապետանոցին այցելութեանն ժամանակ, զարմանօք ու ցաւօք սեռայ թէ պարզապէս նախակրթարան մը կամ՝ հինն այն քաղցրահնչիւն բառով՝ ծաղկոց մ'էր այն վարժապետանոց կոչուած կրթարանն: Հաստատութեան Տնօրինուհին, սակայն, ինձ պատմեց թէ Դպրոցատէր Տիկնանց ընկերութիւնն ինչ դժուարութիւններ հարթելու հարկադրուած էր, հիմնարկելու համար իգական սեռին այդ ազաւանի վարժապետանոցն: Յուզուեցայ խորին կերպով, երբ Օրիորդ Նուրիկ Սիմէօնեան — զոր կրնանք իբր արարչուհին նկատել այդ մանկանց դրախտին — յայտնեց՝ սանուհիներն ինձ մի առ մի ցոյց տալով թէ մէն մին այդ յուսալից մանկուոցն ինչ խաւարաբորբ խորութիւններէ խլուած եւ իւրյս բերուած էին. թէ ինչ սրերձախօսութիւն հարկ եղած էր, համոզելու համար իրական կամ անուանական, բարեմիտ կամ չարամիտ ծնօղներն այդ փոքրիկ վարժուհեաց. թէ ինչ անձնուէր աշխատութիւն հարկ եղած էր, մաքրելու համար այդ էակներն նիւթական եւ բարոյական աղտեղութիւններն



րէն այն միջավայրին, ուր ցայնօր ապրած կամ մանաւանդ տուայտած էին նոքա:

Դաստիարակի գործն արդարեւ դժուարին է. կարի դժուարին է դաստիարակութեան ընկերութեանց գործն, երբ խնդիրն ոչ այնքան ձրի լոյս ծաւալելու որքան աղջկանց ձրի մանկավարժութիւնն ուսուցանելու վրայ է: Դերասանուհի լինելու դիւրամէտ են Հայ աղջկունք, եւ դերասանապետ մ'իր խումբն հեշտիւ պիտի կրնար ստուարացնել վառվռուն դէմքերով ու վաղվղուն ոլորուն սրունքներով. Աղջկանց վարժարանաց խնամակալուհի կարգուած Տիկնայք՝ թէ եւ թախտնձանաց արարողութենէ մը յետոյ՝ կ'ընդունին իրենց յանձնուած վափուկ պաշտօնն. համայն Հայ տիկնայք՝ յաւէտ կամ նուազ ուսեալք՝ յօժարակամ յուղի պիտ' անկանէին, եթէ հրաւիրուէին կապիտօլն ելնել՝ իմացականութեան թագուհի ստակուելու համար: Սակայն վարժուի... Այդ բառն որքան խորթ կը հնչէ Հայուհեաց ախանջներուն. որքան նուաստ կը նկատուի դեռ մանկավարժուհւոյ պաշտօնն՝ յաչս Հայ տիկնայց եւ օրիորդաց փափկասուն: « Վերջերս մի Մանկախարժակսն Դասարան հիմնելու գաղափարն ունեցաւ ընկերութիւնն. այլ ցարդ ներկայացեալ աչակերտուհեաց ուսման վիճակին անբաւականութիւնք մեծ յոյս չի տար առաջադրեալ գործին յաջողութեան: » Դպրոցասէր Տիկնայք այսպէս կը խոստովանին ցաւօք Ընկերութեան վերջին Տեղեկագրին մէջ: Իրաւամբ ըսի վերեւ սոյն Տեղեկագրին համար թէ՛ ցաւալի բաներ կը սլարունակէր. — Իդուկան սեռի լուսաւորութեան համար կազմուած Միութիւն մը կը փորձէ՛ իր հաստատութեան չորրորդ



տարին՝ Մանկավարժական Դասարան մը հիմնել, եւ կը պարտաւորի Տանգէլի Դժոխոց արձանագրութեան նման չարաչուք բան մը դրոշմել իր 1881—1882 ամի Տեղեկագրին ճակատն. « Յոյս չի տար : »

Սրտէդ արիւն կ'երթայ, եթէ փոքր ինչ հայրենասէր ու կրթասէր ես . . . : կ'ընդնջմարես գաւառներն, ուր ախրօղ մթութեանն շնորհիւ անկարօղ է մարդ քայլափոխ մ'ընել աներկիւզ գաւառներն, ուր դաստիարակուհւոց պաշտօնն սչ միայն հրապոյր չազդեր, այլ եւ կ'ազդէ սարսափ մեծաւ իրաւամբ. կը տեսնես ազգին դաստիարակներն, որք զարգանալու միջոց չունին, որք հազիւ ունին ազքատօրէն ապրելու միջոց, որք իբր հեռապատկեր ունին — Հիւանդանոցն. կ'ընդնջմարես ու կը տեսնես. կը շօշափես Հայութեան վէրքերն, եւ արիւն կ'երթայ սրտէդ . . . : Հայոց մայրերն, Հայոց ազջիկներն ալ կ'ընդնջմարեն տրտմութախիժ այն գաւառներն Ասիական աշխարհին. Հայոց մայրերն, Հայոց աղջիկներն ալ կը տեսնեն ազգային դաստիարակներն՝ ընդհանրապէս աղքատ ու նիհար, որք թոքախտէ կամ . . . անթութենէ կը մեռնին — ինչ որ բազում պարագայից մէջ մի եւ նոյն բանն է : Ծնօղաց աչաց առջեւ են հանապաղ այդ կմախներն, որք վարժապետ կը կոչուին՝ Հայոց Պատրիարքին մականունով. ծնողաց ականջին կը հասնին երբէք երբէք Արեւելեան սյրայաւեր<sup>(1)</sup> գաւառաց

(1) Հրկիզումեանց, սովուց եւ ողորմանց պատճառաւ անբեալ եւ աղքատացեալ գաւառք ի մօտոյ պիտի վերանորոգուին, եւ լուսոյ ծաւալման գործն աւելի կանոնաւորութեամբ եւ ընդարձակութեամբ յառաջ պիտի տարուի՝ շնորհիւ մեր նորոգասէր ու կրթասէր Ինքնակալին, որ յաւէտ քան երբէք զբաղիլ կը հանի սոյն խնդրովք :



աղիողորմ աղաղակներն, որք կը հոյցեն վեհա-  
փառ Սուլթանին գթութիւնն՝ անաստան հաւատով:

Իրաց եւ գաւառաց այս վիճակին մէջ ուսումնա-  
տարած ընկերութեանց ներկայացուցիչք կը ներ-  
կայանան չքաւոր ընտանեաց եւ կ'ըսեն. « Եւրո-  
պայի մէջ ազնուական տիկնայք եւ օրիորդք կը խո-  
նարհին ծաղկոցներ ու դպրոցներ հիմնել, վարժու-  
հի կամ մանկավարժուհի կոչուիլ, եւ դասախօսու-  
թիւններ ու բանախօսութիւններ ընել: » Այդ  
քաղցր ու բարձր բանից՝ խորին ու դառնազին  
բանիւք կը սրտասխանեն Հայոց սղբատ եւ տգէտ  
մարք միաձայն. « Ձեր ազնուական մատանները  
թող երթան վարժուհի ըլլան: » — « Ամերիկայի մէջ,  
կ'ըսեն դարձեալ միաբան կրթական միութեանց  
ներկայիչք եւ հրապարակային գրիչք, Ամերի-  
կայի մէջ աւելի վարժուհի կայ քան վարժապետ.  
մեր ազգն ալ օր ըստ օրէ վարժուհեաց թիւն ա-  
ւելցնելով պիտի կրնայ լուսաւորուիլ ու բարգա-  
ւաճիլ, մեծանալ ու հարստանալ: » Հէզ Հայ մայ-  
րիկն, ընկերութեանց պետերուն եւ ազգին խմբա-  
դրապետներուն ցոյց տալով իր հանձարեղ ազջկան  
պատառտուն չապիկն, հեզնական միամտութեամբ  
մը կը գոչէ՝ խելայեղ իմն կերպարանօք. « Ինձի  
համար աս կտաւէն ուրիշ ամերիկա չի կայ. ո՞ր է,  
Պօլսոյ մօտ է շատ, Ադաներ, ձեր Ամերիկան...: »

« Յառաջ, յառաջ. » Եթէ լաւ կը յիշեմ, այս վեր-  
նագրով եւ մանաւանդ նոր աշխարհին հսկայաքայլ  
յառաջադիմութեանց վրայ խօսող սքանչելի գլուխ  
մը կայ ի. Էմէ-Մաուդէնի Մարց դասխարակութեան  
այն գլխովին սքանչելի գրքին մէջ, զոր բաւական



Ժամանակէ հետէ ձեռքս չեմ կրցած տունել: Սակայն եթէ չեմ այլ եւս կարգար այն ոսկեղենիկ մատեանն, ահանջիս կը հնչէ քաղաքակրթութեան վսեմ ձայնն անդադար. « Յառաջ, յառաջ. » Ու կը կրկնեմ ես ալ. « Յառաջ, յառաջ: » Ու մինչ զրիչովս կը հաստատեմ ցաւօք թէ յառաջագիմութիւնն այնքան յամբ կը կատարուի մեր աշգիին մէջ, արձագանգն՝ հարիւրասպատկուած ու ըլլերապատկուած ինձ կը վերադարձնէ ձայնս, « Յառաջ, յառաջ: » Եւ հոգւոյս մէջ կը զօրանայ յառաջագիմութեան հաւատքն, եւ արտուր իրականութիւնն աչքէս տակաւ կը հեռանայ: Բարերաստիկ այդ ժամերուն մէջ կը գրեմ հատուածներ, որք իրենց վրայ կը կրեն « Բերկրատիթ երեւոյթներ » եւ այս տեսակ դեղածիծաղ ատղասներ. այդ քաղցրիկ պատրանայ ժամերուն մէջ ինձ կ'երեւի ազգս՝ որ մեծաքայլ կը յառաջագիմէ քաղաքակրթութեան ուղւոյն մէջ. եւ Մարց քրստիարակութեան պատուական հեղինակին հետ կը գոչեմ, — Միացեալ ընկերութեանց, Գալրոցասէր Տիկնանց, եւ համայն Հայոց ու Հայուհեաց հզօր բարբառով կը գոչեմ. ՅՍՌՍՂ, ՅՍՌՍՂ:

---

## Ծ Ի Ծ Ա Ղ

Ե Ի

### ԳԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԳԻՏԱՅ

Բաւական ժամանակէ հետէ Պարոնեան — իր ճիւղին մէջ եզակիան գրադէտ մը կրնանք անուանել առանց մակդրի — կ'ըսէր ինձ՝ երբ միմեանց հանդիպելինք՝ թէ մտադիր էր պարբերական հրատարակելու:



տարակուսթիւն մ'ընել Ալֆօնս Բառի Կիբերուն նման, եւ նա, որ ինձ նման ամեն պարագայի մէջ միայն իր ներշնչութեան կը հետեւի՝ յոռի կամբարի, կը հարցնէր ինձ թէ ի՞նչ ոճ, ի՞նչ ձեւ, ի՞նչ անուն իր հրատարակութեան համար յարմար կը դատէի. — Պարոնեան՝ որ քան ոչ զոք աւելի գիտէ խայթել՝ գգուել ալ կը սիրէ, խորհուրդ հարցնելով այսպէս իր բարեկամաց, երբ անդառնալի կերպիւ որոշած է մտքին մէջ ամեն բան, ոճ, ուղղութիւն, անուն, եւլն:

Նոր տարւոյն հետ սկսաւ երեւիլ Ազգային ջոշերու հեղինակին նոր հրատարակութիւնն, այր անունն ստեղծ գործին ալ կը յարմարի Պարոնեանին — Ծիծաղ: Կան որք կ'արտասուեն ու կը ծիծաղին փոփոխակի, կամ ծիծաղն ողբին կը խառնեն նոյն երկին մէջ ու նոյն էջին մէջ. Գերմանացի Հանրի Հայնն այնպէս է: Այնպէս չէ՛ Յակոբ Պարոնեան. Նա կը ծիծաղի՛, կը ծիծաղի՛, կը ծիծաղի՛, — թէեւ ճշմարտութիւնն այն է թէ՛ ծիծաղի ձեւով կ'արտասուէ Պարոնեան մարդկային մոլութեանց ու մուրութեանց վրայ, որպէս նախորդ տեսրիս մէջ ըսի:

Զերթ Ալֆօնս Բառ՝ Յուանացի Արխտոփանն՝ իր վերոյիշեալ Պիծակերուն մէջ, Թասրոնի նախկին խմբագրապետն ալ Ծիծաղին մէջ իր ծիծաղին նիւթ կ'ընարէ՛ ժամանակակից անցքերն եւ անձերն. — ու սէտք է խոստովանիլ թէ մեր երկրին մէջ, մեր ազգին մէջ, երգիծաբանն նիւթոց առատութեանէն կը շուարի քան նիւթ գանելու կը դժուարի: Սակայն իրերն իրենց անուամբ կոչել, ծաղրելի բանն համարձակապէս ծաղրել, այդ ներելի չէ ոչ



կամուրջէն անդին ո՛չ կամուրջէն ասդին: Ի՞նչ հարկ է ընել ուրեմն: Հարկ է փոխել իրաց անունն, հարկ է դիցարանութեան կամ բնական պատմութեան դիմել, հարկ է բանականաց աշխարհն անբան էակաց աշխարհի փոխարկել, — եւ ծաղրել: Հարկն արդարեւ մարդն հնարագէտ կ'ընէ. Գիտեն ընթերցողք թէ հայրն առականսոսաց՝ Փռիւզացին եզովբոս՝ դերի մ'ըլլալով, անկարօղ էր անսքօղ յայանել ճշմարտութիւնն, եւ իր տէրերն ուղղակի յանդիմանել՝ իրենց անիմաստ բանից եւ անիրաւ արարից համար: — Բայց, կ'ընդմիջեն զիս բարեմիտ ընթերցողք ոմանք, եզովբոսէն ի վեր աշխարհ հիմնապէս փոխուած է. գերութիւնն երկար ժամանակէ հեռէ ջնջուած է: — Գերութիւնն, իմ բարեմիտ եղբայրներս, իր ձեւն եւ իր անունն եւեթփոխած է. Պարոնեան՝ իր ազատութեան մէջ՝ այնքան ազատ չէ գուցէ որքան Քսանդոսի ծառայն իր գերութեան մէջ: Այո՛, մարդ մը որ, եզովբոսի պէս, Արիստոփանի պէս, Պարոնեանի պէս, վէհ կոչում մ'ունի. մարդ մը, որ տէրերն աւելի խոր եւ աւելի բարձր կը տեսնեն քան հասարակ մահկանացուաց տէրերն. մարդ մը, որ հանրային անձանց եւ ազգային հաստատութեանց թաքուն թերութիւններն ու տխրեղծութիւններն նշմարել կամ մակարերել կարօղ է. մարդ մը, որ ծնած է բարուց ուղղութեան եւ օրինաց անթերի գործադրութեան վրայ բարձրէն հսկելու համար, սուրբ զայրոյթով կամ սուր ծիծաղով նշաւակելու համար զեղծումներն ու զանցառումներն. մարդ մը, որ հանրային բարօրութեան ու վրկութեան տեսնող կը վառի, որ՝ մտաւոր ազատագրութեան ու բարո-



յական վերածնութեան նկատմամբ՝ բանին եւ գիրին ազդեցութիւնն ընդհանուր պատմութեան մէջ որպէս եւ իր շուրջ կը տեսնէ յայտնի. այդ մարդն, ո՛չ, ազատ չէ խօսելու ճշմարտութիւնն երկրագունտին եւ նոյն իսկ Եւրոպական աշխարհին ամեն մասանց մէջ: Գրագեհն — ընդհանուր անուամբ այսպէս կը կոչուի բարքերն եւ օրէնքներն ուղղելու կոչում ունեցող մարդն — ամեն ազգաց մէջ չունի նոյն գիրքն եւ նոյն իրաւունքն. Օրինաց խստութենէն կը վրիպի յաւէտ կամ նուազ ճարտար չարագործն, եւ ազգային իշխանութեան մէջ նա սրաշտպան մ'ապահովապէս ունի. սակայն զրագէտն՝ որ յօգուտ բարւոյն կը ձաղկէ չարարարն՝ ապահովապէս, աւանդ, ազգային իշխանութեան մէջ թշնամի մ'ունի. զրագէտն՝ իր տոհմային աւանդութիւններն անվթար պահելու նախանձախնդիր զրագէտն՝ ազգային իշխանութիւնն, աւանդ, հանապազ իր ետեւ չունի: Գրագէտն, այո՛, Հայ ազգին մէջ այսպէս գերի է մահանին ու մամոնային, ազգային պաշտօնատարին՝ որ կը խարդաւանէ, ազգային կղերին՝ որ գոռում գոչում կը հանէ, ազգային մեծատունին՝ որ որքան աւելի դրամ այնքան աւելի քուէ ունի — ճշմարտութեան եւ արդարութեան դէմ: Գրագէտն՝ հակառակ իր վեհ կոչման՝ պարտի նուաստանալ հզօրին առջեւ, ոսկեգօծել անբարոյ-յականութիւնն, ազգասիրութիւն անուանել մատնութիւնն, ի վաճառ հանել իր գրիչն, իր խիղճն. Ասպա թէ ոչ պարտի լռել զրագէտն, եւ երթալ — որպէս ըսաւ վհատեալ հեղինակ մը — կաղամբ մշակել . . . :

Պարոնեան սակայն, որ՝ չը գիտեմ ինչ թմբրե-



ցոցցիչ դեղի մ'ազդեցութեամբ՝ մաղ մնաց բուր-  
վառի պիտի փոխէր իր գրիչն եւ կամ խայթոցն,  
հնարավորան Պարոնեան միջոց մը գտած է բարոյա-  
կան հաշմութիւններն անպատիժ տնազելու, անպա-  
տիժ խայթելու եւ ծայրալիր ծիծաղելու: Դիցարա-  
նութեան, Բնական պատմութեան, նոյն իսկ Տնկա-  
բանութեան օճանն հայցած է. նոր տեսակ առա-  
կախօս մը դարձած է: Ո՛չ անձի եւ ո՛չ ազգի, ո՛չ  
լրագրի եւ ո՛չ խմբագրի, ո՛չ վարչութեան եւ ո՛չ ո-  
ւրէ՛ ազգային հաստատութեան անուն կայ Ծիծա-  
ղին մէջ. — կը ձղնին ու կը բուռնին Ծիծաղի դիւ-  
ցազունք: Անձ մը կայ Ծիծաղին մէջ, բայց հեղի-  
նակին անձն է այն. — զի հեղինակն իրաւունք ունէր  
անասնոյ չը փոխակերպուելու: Ազգ մը կայ, բայց  
ճագարաց ազգն է: Հանրապետութիւն մը կայ,  
բայց մեղուաց հանրապետութիւնն է: Արժանապա-  
տիւ մը կայ, բայց ճանձ է. Գերապատիւ կայ, բայց  
ճպուռն կամ ադուան է. Մեծապատիւ կայ, բայց  
կատու կամ աղուէս է: Կերբերոս Ծիծաղին դռնա-  
պանն եղած է: Բանջարեպէնի մը քերքին անունն  
ի կիր արկեալ է, հա՛րկ է յայտնել ինչ բանի հա-  
մար. Լրագրապետաց պատիւ ըրած է Կերբերոսի  
նոր տէրն, եւ թեւաւոր կենդանեաց — թուրթա-  
կաց — կարգ բարձրացուցած է հանրային կարծե-  
աց ուղղիչներն. Աւելորդ է ըսել թէ՛ լրագրա-  
պետք, հանրային կարծիքն ուղղելու համար,  
տխիտ տեղ՝ պիտի գրեն տխիտ: Եթէ թռչնոց ա-  
ռանձնաչնորհեալ դասուն պատկանին խմբագրա-  
պետք, որքան եւս առաւել զրաղէտք, որք կը սա-  
ւառնին յաւէտ բարձանց վրայ, խառն լուրերէն ու  
հեռագիրներէն վեր, ազգային կամ քաղաքական



տեսութիւններէն վեր, տիեզերաց ու տիեզերական նիւթոց վրայ տեսութիւններ ընելով յաւէտ ճայնարկութեամբք ու ձեւաբանութեամբք, ու կողովներով ծաղիկ ու հակերով դիցաբանական անուններ սպառելու թէութեամբ. . . — Փիլոսոփայոս եւ Անթոս, « երկու գրագէտ թռչուններ » Ծիծաղի մէկ ոստին վրայ, սխալեցայ, « օգին մէջ » կ'երեւին Յունվար ամսոյն վերջերն. Որսորդք կը փութան եւ ունին հարուստ հրազէն. սակայն ինչպէս որսալ այդ տարօրինակ թռչուններն. Անթոս « մէկ ակնթարթի մէջ Արաբիայէն Վոսփոր, Վոսփորէն Հնդկաստան կը վազէ. » Փիլոսոփայոս ալ « այնքան կը դովէ » հաւորսներն, որ զինաթափ կ'ըլլան եւ հայելի մը կը փնտռեն՝ հիանալու համար այն հազուագիւտ բարեմասնութեանց վրայ, զորս կը վերադրէ նոցա գովաբան թռչունն: —

Այդ Փիլոսոփայոս եւ Անթոս վերնագրեալ առակին նկատմամբ ներուի ինձ դիտել թէ՛ արդեօք Պարոնեան չափազանց անաչառութեամբ չը՞ գտաներ գրագէտ մը, ոյր Ծաղիկն՝ աւելի, շատ աւելի յարգ ունի քան « թթու մի ծաղիկն ». թէ հետեւաբար՝ անտեղի եւ անիրաւ ստգտանք մը չուղղէ՞ր Պարոնեան առ Փիլոսոփայոսն, որ գուցէ չափազանցէ մերթ հեղինակաց յատկութիւններն, այլ ո՛չ բանջարաստանի մը ծաղիկն ու բուրաստանի մը ծաղիկն ընդ միմեանս չփոթելու աստիճանն. նաեւ Փիլոսոփայոս կը գնահատէ մեծատէս պարզութիւնն, ո՞ճի մէջ որպէս ամեն բանի մէջ. սակայն անիմաստ կը նկատէ պահանջել՝ օրինակի համար՝ վիպական Հիւկօէն որ իրական Զօլաին նման մատենագրէ. կամ, ազգային գրականութեան մէջ, պահանջել



Տնանաացի ( գեղասէր ) Չերագէն որ Անգլիացի ( պիտանասէր ) Բէչեանին ժուժկալ ոճն ունենայ : Պարոնեան Անթոսի բերնով սապէս կը դատէ Փիլոսփաղոսն՝ իբրեւ գրագէտ . . . թոչուն . « Մինչեւ այսօր գրածներուդ երեք մասին հեղինակն լիթուէն է : » Անթոսի խօսակից . . . թոչունն՝ ապաքէն կը յիսփագէր թէ վերագրեալ դատաստանն , որ անտարակոյս իբրեւ քննադատութիւն կ'ուղղուէր Փիլոսփաղոսին , արձանագրուէր իր տապանին վրայ իբրեւ լաւագոյն գովեստն . նա կը յիսփագէր մանաւանդ թէ Պարոնեան , որ՝ վարդապետաբար կամ զաւեշտաբար ի վեր կը հանէ Փիլոսփաղոսին հակասութիւններն — յաճախ կ'ամաւոր — , բնաւ չիյնար ինքն՝ սկիւմայ հակասութեանց մէջ , որպէս երբ կը գրէ թէ Փիլոսփաղոս , « ոյր գրուածոց երեք մասին հեղինակն է լիդուէ » , ճշմարտութիւնն առ հասարակ կը թշնամանէ . կարծեմ թէ ճշմարտութիւնն աւելի ջերմեւանդ երկրպագու մ'ունեցած չէ քան լիդուէ :

( Շարունակելի )

## ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Թէեւ բոլոր դաւառացիք չը գիտեն , բայց մեք պէտք չէ մոռնանք եւ պէտք է բոլոր դաւառացւոց ալ ուսուցանենք թէ Երեւոյթիսանական ժողով մ'ունինք , ոյր անդամք անձնիւր նիստի չեն բնդունիր 20 Քրտնք , եւ յումէ Հայ ազգն ալ նշանաւոր ծառայութիւններ չընդունիր առկաւին : Ապաքէն Բնդհանուր ժողովն անխոյթ չը մնար իր օրակարգին մէջ անցունել ազգային կենտական խնդիրներն — եւ



մեք անտարակոյս կը հիանանք անկեղծօրէն Ազգային ժողովին այդ բարեսրտութեան եւ կամ քաջասրտութեան վրայ : — սակայն բողոքովին անխոյժ կը մնայ լուծելու ազգային կենսական խնդիրներն : Այլ թէ մեր Երեսփոխանական ժողովին անդամոց գոնէ կէսն այդ կենսական խնդիրներն ուրոյն ուրոյն ուսումնասիրելու ժամանակ եւ կարողութիւն ունի՞ . այդ ալ խնդիր մ'է . կրնանք ըսել թէ այդ ալ կենսական խնդիր մ'է , զոր լուծելն ոչ ընդհատ կարեւոր է՝ կը մտածենք բազմաց հետ :

Կը յիշեն ընթերցողք թէ եռանդուն եւ բազմաբղիւն երիտասարդ մը , Պարոն Խաչիկ Սարաճ , երեսփոխան ընտրուելով Ազգային ժողովոյն նշանաւոր հրաժարական մ'ուղղեց , — կրնայինք ըսել հզօր նետ մ'ուղղեց , — զոր վարչութեան եւ ժողովրդեան ուշադրութեանն յատկապէս յանձնեցի յայնժամ Մասիս օրաթերթին մէջ : Եթէ հաւաքածոյիս սահմանն անձուկ չըլլար , այդ պատմական հրաժարագիրն աստ պիտ' արտատպէի՝ հանդերձ մեկնարանութեամբք ու խորհրդածութեամբք : Այժմ կը շատանամ կրկնելով Պարոն Սարաճի հետ թէ՛ նիւթական ու բարոյական բազում պայմաններ կան , զորս պարտի լրացնել Երեսփոխանութեան ընտրելին . թէ բազում երեսփոխանք Ազգային ժողովոյ մէջ աթոռներ յափշտակած են քան աթոռներ իրաւամբ կը գրաւեն : Ներկայ պայմանօք կազմուած Ընդհանուր ժողովէ մը չսկինկալուիր աւելի մեծ արդիւնքներ , աւելի նշանաւոր ծառայութիւններ : Ըստ սրում տհաս ու տկար ընդհանուր առմամբ , դայթ ի դայթ կ'ընթանայ բնակաւնաբար մեր Ընդհանուր ժողովն : — Հոչակաւոր մա-



տենագրաց համար կը պատմուի թէ՛ ժամանակի խնայութեան համար զանց կ'ընեն կետադրութիւնն իրենց գրուածոց մէջ. միջակէտ ու վերջակէտ չը տեսնուիր այդ գրութեանց մէջ: Մեր Ազգային ժողովն ալ ոչ նուազ հռչակաւոր է. սակայն իր տենագրութեանց մէջ, միջակիտից, ըսել կուզեմ միջադիպաց արձանագրութիւնն յոյժ պատկառելի տեղ մը կը գրաւէ տարաբախտաբար. հազիւ կարեւոր խնդրոյ մը վիճարանութեան կը սկսուի, եւ ահա միջադէպ մը կը յարուցուի, վիճարանութիւնն է կը խտրանի, ժամանակն է, թանկագին ժամանակն է կ'անցնի գրահետ:

Հարկ է, կը գոչենք, որ ազմկարար ու խռովարար տարերք արաքսուին Ազգային ժողովոյ ծոցէն, եւ մտնեն անդ պարկեշտ ու բանգէտ անձինք. անձինք՝ որք անկեղծօրէն նախանձախնդիր ըլլան ազգին ժամանակին, պատուոյն ու յառաջաջադիմութեան. անձինք՝ որք անարատ եւ արգիւնաշատ անցեալ մ'ունենան. անձինք՝ որք, ի մի բան, միացնեն Հայրենիքի արդարախոհ աշխատակցին հրաժարագրին մէջ յիշուած պայմաններն, — գէթ գլխաւորներն առ այժմ:

Վերստին պիտի խօսինք սոսկ կարեւոր նիւթոյն եւ այլ յարակից նիւթոց վրայ:

---

### ԳՐԻԳՈՐ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

Թեև բոլորովին անձանօք մեզ, այլ մեր սրտին մեծ ցաւ ազդեց Հայկական Կրթարանի Հիմնադիր-Տնօրէն Պարոն Գուրգենի մօրաքնոորդի՝ Գրիգոր Էփենտի Պարոթեանի տարածամ մահն: Ազգականներ, բարեկամներ, հեռուոր ծանօթներ իսկ որք միայն ընդնշմարած են այդ երիտասարդն, հա-



ւասարապէս ու դառնապէս կ'ոտըան զայն, որպէս քէ խան-  
դակաբ եղբայր մը կամ սիրասուն որդի մը կորուսած ըլլա-  
լին : Բարեսէր եւ անշահաւոր մարդոց կորուստն այսպիսի  
ներգործութիւն մը կ'ընէ յաւետ, երբ մանաւանդ նա՝ որ ընդ  
միշտ ի մենջ բաժնուած է՝ սիրահուր սրտի մը հետ յուսահուր  
միտք մ'ունէր. երբ մանաւանդ զգայուն էակաց հիւանդու-  
թենէն, հիւժախտէն նա մեռաւ ծաղիկ հասակին մէջ. երբ  
մանաւանդ՝ հայր մ'ունենայով հանդերձ՝ որք նա բողոց իր  
հէգ ընտանիքն... : Հանգաց Տեսչութիւնն իր կարօղագոյն  
պաշտօնատարաց մին կորոյս. Հայութիւնն իր ազնուագոյն  
անդամոց մին կորոյս. իսկ իր սերն, իր յոյսն, իր արեւն,  
աւանդ, կորոյս Պարութեանի հէգ ընտանիքն... : Նմա Դու  
լեր հայր ու մխիթար, ո՞ երկնաւոր Հայր :

ՅԱՒԱԿՅՈՒԹ ԻՒՆՔ ՈՒ ԽՆԴԱԿՅՈՒԹ ԻՒՆՔ

— Խորին ցաւակցութիւն ու սրտազին ուրախակցութիւն առ  
Վսեմափայլ Գրիգոր Օտեան Էֆէնտի : Յաւակցութիւն այն դառն  
կորստեան համար, զոր ըրաւ յանձին իր վաղամեռիկ քրոյա-  
ղստերն Եւզինէ Եագմահեանի : Խնդակցութիւն այն զիւտին հա-  
մար, զոր ըրաւ Նորին Վսեմութեան հանձարեղ քեռորդին՝ Կը-  
կանեան Օննիկ Էֆէնտին, հնարելով Թէրթիչն. ներդաշնակութեան  
եռանդուն սիրահար եւ իզական սեռին նկատմամբ յաւէտ քաղա-  
քավար այդ հնարագէտ երիտասարդէն կը սպասուէր այդ զիւտն :

— Ընթերցողք կը յիշեն Թէ Հայագրի վաճառականներէն Պարոն  
Յովհաննէս Արշակունի, նախկին աշակերտ Նուպար-Շահնազար-  
եան վարժարանի, Ազատ-Որմնադրաց ընկերութեան Վարչադաշտակ  
աստղ անուն օժեակին ատենաբան ընտրուելուն առթիւ ընդարձակ  
բանախօսութիւն մ'ըրաւ լի իմաստասիրական գաղափարներով ու  
մարդասիրական զգացումներով, որ զովեստիւք հանդերձ հրատա-  
րակուեցաւ մայրաքաղաքիս Թէ Ֆոանասի լրագրաց ոմանց մէջ :  
Տեղոյս Եւրոպական Թերթերէն միոյն մէջ գողոզութեամբ ու գո-  
հովեամբ կարդացինք մեր նախկին ընկերակցին մէկ նոր գեղե-  
ցիկ ճառն՝ Ազատ-Որմնադրաց ինչոյքին մէջ արտասանուած : Չեր-  
մապէս կ'ուրախակցինք Պարոն Յովհաննէս Արշակունիի :